

Լիաննա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ  
Տաթևիկ ԿԲՐԱԿՈՍՅԱՆ  
Երևանի պետական համալսարան

ՄԻԶԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՌՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԾՈՒՐՉ

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել զանազան միջմշակութային հաղորդակցության մերողների կիրառման արդյունավետությունը օտար լեզվի դասավանդման ընթացքում։ Ուսումնասիրվել և մշակվել են ուսուցման այնպիսի ձևեր ու մերողներ, որոնք մեծապես կօգնեն ուսանողներին ոչ միայն հաղորդակցվել անզարեզու ուսանողների հետ, այլև հասկանալ օտար մշակույթն ու լեզվական առանձնահատկությունները։ Աշխատանքում քննարկվում են նաև զանազան մշակութային տարրերությունները՝ որոնց մեջնարանությունները, որոնք մեծապես նպաստում են նաև դասախոսների և ուսանողների միջև փոխհարաբերությունների հաստատմանը։

**Քանակի բառեր.** մշակույթ, էլեկտրոնային հաղորդակցություն, դասավանդման մերողիկա, միջանձնային հարաբերություններ, շարժմունքների լեզու

Լեզուն մարդկային կյանքի կենսագործունեության ու ճանաչողության հիմքում է։ Մարդկային լեզուն կարելի է սահմանել որպես արտահայտության այն լեզվակելի միջոցների ամբողջությունը, որոնք բնորոշ են հատկապես մարդուն /Զահուկյան, 1992/։ Մարդիկ միմյանց ճանաչում են լեզվի կիրառման միջոցով։ Լեզուն դիտարկվում է, որպես սոցիալական ինքնության խորհրդանիշ, որը մշակութային իրականության արտացոլումն է։ Յուրաքանչյուր լեզու մարդկային մշակույթի զարգացման արդյունք է, որի միջոցով մարդկանց մտքերը ձևավորվում և փոխանցվում են միմյանց։ Լեզվի ամենագլխավոր գործառույթը հաղորդակցության գործառույթն է, որը շիման, մտքերի փոխանցման և փոխանակման միջոց է։ Լեզու սովորելը ինքնին ենթադրում է սովորել մշակույթ, քանի որ տիրապետել լեզվական տարրերին դեռ չի ենթադրում հաղորդակցվել տվյալ լեզվով։

Միջմշակութային հաղորդակցության ընթացքում շատ կարևոր է ուսանողներին իրազեկել միջմշակութային արժեքների մասին։ Միջմշակութային հաղորդակցությունը մշակութային և լեզվաբանական ծագում ունեցող անհատների և տարրեր խմբերի միջև հիմնված հաղորդակցություն է։ Այն առաջացել է ենուկյալ սահմանումներից՝

1. Հաղորդակցությունը մարդկանց միջև լեզվի միջոցով իրականացող ակտիվ փոխհարաբերություններն են։ Միջմշակութային բառը ենթադրում է, տարրեր մշակույթների ներկայացուցիչների միջև հաղորդակցական հարաբերություն, որտեղ մշակույթը մարդկանց վարքագծի դրսւորումն է քե՛ հասարակական կյանքում և, քե՛ ազգային ուղղվածություն համատեքստերում՝ քաղաքական, լեզվաբանական, տնտեսագիտական և այլն։

2. Սիցմակուրային հաղորդակցությունը սահմանվում է և որպես գալափար, և՝ որպես կարողություն։ Սիցմակուրային կարողությունը անհատների լեզվի ակտիվ տիրապետումն է, որն իրականացվում է երեք հիմնական հատկանիշների միջոցով՝ գիտելիք, հմտություններ, հատկություններ։

Դասավանդողների գեր նպատակն է յուրաքանչյուր ուսանողի մեջ սերմանել սեր, ձգտում և ցանկություն ուսումնասիրելու օտար լեզու։ Վերջինիս իրագործման համար անհրաժեշտ է, նախ և առաջ, որ դասավանդողներն ուսումնասիրեն թիրախ լեզուն և մշակույթը, ապա՝ նրանց փոխհարաբերությունները և հետո միայն փորձեն փոխանցել անհրաժեշտ տեղեկատվությունն ու գիտելիքը ուսանողներին։ Ներկայում հաղորդակցման ամենաարդյունավետ միջոցը համացանցն է։ Այն գրավել է ողջ աշխարհը՝ բացելով մեր առջև գրեթե բոլոր անանցանելի ճանապարհները։ Այն համարվում է անսպառ տեղեկատվական աղբյուր, որտեղ յուրաքանչյուր անձ կարող է գտնել իրեն հուզող բազմաթիվ հարցերի պատասխաններ։ Համացանցը մեզ հնարավորություն է տալիս ծանոքանալու տարրեր երկրների և նրանց մշակույթների հետ։ Եվ թվում է, թե մարդկանց շփումը համացանցի միջոցով ավելի դյուրին է դարձել, որի արդյունքում միցմակուրային հաղորդակցությունը նորանոր վերելքների է հասնում։ Ներկայում մենք հնարավորություն ունենք հաղորդակցվելու էլեկտրոնային տարրեր նամակների և կայքերի միջոցով ինչպես տեղի, այնպես էլ օտարերկրյա մշակույթների ներկայացուցիչների հետ, որն առավել արդյունավետ միջոցներից մեկն է։

Ինչ վերաբերում է մշակույթի էությանն ու զարգացմանը, ապա կարելի է ասել, որ այն բազմանշանակ է։ Ոմանց համար այն որակյալ գրականություն է, երաժշտություն, արվեստ կամ սնունդ։ Այս եզրույթնը առաջին անգամ օգտագործել է անգլիացի գիտնական Ե.Բ. Թեյլորը իր “Primitive Culture” գրքում, որտեղ նա նշում է, որ մշակույթն այն ամբողջությունն է, որն իր մեջ ներառում է գիտելիք, հավատք, արվեստ, օրենք, սովորույթ և մնացած այն բոլոր ունակությունները և սովորությունները, որ մարդկային էակը՝ որպես հասարակության անդամ կարող է ընկալել /Թեյլոր, 1994/։

Մշակույթը մշտապես կարող է փոփոխվել և իր մեջ ներառել նորանոր սովորույթներ և ավանդույթներ։ Լեզվում նույնպես նկատելի են նորաբանությունների ծագումն ու կիրառությունը։ Տարրեր մշակույթների մարդկանց համար միևնույն բառերը կարող են տարրեր նշանակություններ ունենալ, անգամ, եթե նրանք խոսում են միևնույն լեզվով։

Սովորել օտար լեզու նշանակում է ինչ-որ չափով սովորել օտար մշակույթ, ծանոքանալ տվյալ մշակույթի գրականությանը, արվեստին, սովորույթներին, ծեսերին ու ավանդույթներին։

Սիցմակուրային հաղորդակցության ընթացքում կարևոր է իրազեկությունը, այսինքն այն կարողությունը, որը հնարավորություն է ընձեռում անհատին ճշգրիտ և պատշաճ կերպով հաղորդակցվել յուրաքանչյուր միջմակուրային իրավիճակում, որի հիմքում ընկած է միջմակուրային գիտելիքը, հմտությունն ու վերաբերմունքը։ Սիցմակուրային վերաբերմունքի կարևորա-

գույն տարրերից են անկեղծությունն ու մշակույթի գնահատումը, անկաշկանդ շփվելու կարողությունն օտարերկրացիների հետ: Այս անկեղծությունը և մշակույթի տարբերության գնահատումը կարող է նպաստել մշակութային կրթությանը կամ լեզվի ուսուցմանը: Միջմշակութային կարողության հիմնական գործոնն անհայտ իրավիճակներում անվատահության առաջացումն է, որտեղ մասնակիցները պետք է փորձեն հնարավորինս հաղթահարել խոչընդոտները: Զարգացող միջմշակութային կարողությունը դանդաղ, աստիճանաբար ձևափոխվող ուսումնական գործընթաց է, որը ենթադրում է օտար լեզվի ուսումնասիրություն, միջմշակութային ուսուցում և այլ մշակույթների մարդկանց հետ փորձի փոխանակում, նոյնիսկ, եթե ոչինչ չի կարող լիովին փոխարինել առերես դասավանդմանը և ուսուցմանը, ապա այս դեպքում պետք է կիրառվեն տեղեկատվական տեխնոլոգիական զանազան միջոցներ /Թեյլը, 1994/:

Միջմշակութային հաղորդակցման գաղափարի հիմքը գիտելիքն է, ընդունում

1. Կարևոր է, որ մարդիկ հասկանան միջմշակութային հաղորդակցության խնդիրները և գիտակցարար ներդնեն իրենց ջանքերը՝ հաղթահարելու իրենց առջև ծառացած խոչընդոտները:

2. Կարևոր է գիտակցել ինչ-որ մեկի ջանքերի անհաջող լինելու փաստը և փորձել կարգավորել նրա վարքագիծը:

Փոխադարձ շփման ընթացքում մարդիկ հաճախ հաղորդակցվում են արտակեզվական միջոցներով՝ անտեսելով լեզվական կողմը: Սա վերաբերում է մասնավորապես փոխգործող լեզվի գործառությներին, որտեղ հասարակական շփումը առաջնային դերում է և որում էական է ո՛չ թե այն, թե ինչ է փոխանցվում այլ այն՝ թե ինչպես է փոխանցվում, այսինքն ինչ է հնարավոր արտահայտել մարմնի լեզվի, շարժումների, տեսողական շփման, ֆիզիկական տարածության առկայության և ոչ լեզվական ուղերձների միջոցով: Յուրաքանչյուր մշակույթ լեզուն յուրովի է կիրառում, հետևաբար մշակութային հաղորդակցության գործընթացում ոչ պակաս կարևոր են նաև զանազան շարժումները (զիսի և ձեռքերի շարժումները, աչքերի թարթումը և այլն): Սակայն այս շարժումները տարբեր հասարակություններում տարբեր կերպ են ընկալվում և մեկնաբանվում: Դիտարկենք հետևյալ մշակութային տարբերությունները, այսպես օրինակ՝ հայկական մշակույթում համաձայնեցումը ընկալվում է ետ ու առաջ տանելով, իսկ անհամաձայնեցումը՝ գլուխը աջ ու ձախ շարժելով: Մինչդեռ Բուլղարիայում ճիշտ հակառակն է: Ծապոնացիներն ել իրենց համաձայնեցումը արտահայտում են ձեռքերը պարզելով կրծքավանդակին և թափահարելով:

Միջմշակութային հաղորդակցության մեջ մեծ դեր են խաղում նաև դիմաշարժումները և աչքերի արտահայտությունը: Աչքերը կարող են արտահայտել հետաքրքրություն, ձանձրույթ, հյուրասիրություն, հիացմունք, իրապուրանք, հիասքափուրյուն, հասկացողություն, անհասկացողություն և այլն: Բարձրագույն գիտելիքներ ունեցող ուսանողները պետք է ծանոթ լինեն ոչ միայն տվյալ լեզվի մշակույթին այլ նաև պատմությանն ու կրոնին: Այս առումով որոշ

ուսուցողական մեթոդներ կարող են օգտագործվել՝ ուսանողներին քաջալերելու և նպաստելու միջմշակութային հաղորդակցական հմտությունների զարգացմանը, օրինակ՝

- օգտագործել կարճամետրած ֆիլմեր, ուսանողների միջմշակութային կարողությունները զարգացնելու համար,
- ուսանողները հիմնականում պետք է իրենց ուշադրությունը սկսեն հետևյալ գործոններին՝ լեզվական ու արտալեզվական միջոցներին, մարմնի լեզվին, շարժմունքներին, մշակութային ինքնությանը, փողոցային մշակույթին, տոններին, սովորույթներին, ընտանեկան կյանքին, գենդերային խնդիրներին, սերունդների բախմանը, ինչպես նաև ազգայնականությանն ու ռասսայականությանը,
- դիտել ներկայացումներ իրենց և այլ երկրների մասին,
- բնադրել խաղային ներկայացումներ տարբեր մշակույթների ներկայացուցիչների մասնակցությամբ,
- օգտագործել համացանց, ձայնասկավառակներ՝ լուսաբանելով օտար մշակույթը,
- զուգահեռներ անցկացնել սեփական մշակույթի և օտար մշակույթի միջև,
- զրոյցներ ունենալ ուսանողների հետ օտար երկրների մշակույթների մասին և մարդկանց վերաբերող կարծրատիպերի մասին,
- ներկայացնել միջմշակութային ուսումնասիրության նախազիծ,
- կազմակերպել շնորհանդեսներ,
- ներկայացնել զեկույցներ,
- ճշգրիտ գնահատել ուսանողների ներուժը:

Այս ամենի արդյունքում ուսանողը հնարավորություն կունենա ազատ և անկաշկանդ հաղորդակցվել օտար լեզվով, իսկ դասավանդողն էլ իր հերթին գոհունակությամբ կարձանագրի իր կատարած աշխատանքի դրական արդյունքը:

Վերը ներկայացված միջոցները հնարավորինս դյուրին կդարձնեն դասավանդողի և ուսանողի միջև փոխհարաբերությունների ձևավորմանն ու հաստատմանը:

## **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Զահոնյան Գ. Բ. Ծարահյուսական ուսումնասիրություններ, Երևան, Ստորև հրատարակչություն, 2003:
2. Byram M. E. Culture and Language Learning in Higher Education. Cambridge: Cambridge University Press, 2004.
3. Kramsch C. Language and Culture. Oxford: Oxford University Press, 1998.
4. Tylor E. B. Primitive Culture. New York: J. P. Putnam's son, 1871.
5. URL: <http://eva.ru/travel/read/-547.htm>

6. URL: <http://langua.eu/theme/intercultural-communication>
7. URL: <http://Simple.wikipedia.org./wiki/culture/>
8. URL: <http://Antro.palomar.edu/culture/culture-1.htm>
9. URL: [http:// radicalpedogogy.icaap.org/content/issue3\\_317-thanasoulas.html](http:// radicalpedogogy.icaap.org/content/issue3_317-thanasoulas.html)
10. URL: [http://sworld.com/ua/index.php/ru/modern-linguistics-and-intercultural-communication-\(c112/11944-c112-114\)](http://sworld.com/ua/index.php/ru/modern-linguistics-and-intercultural-communication-(c112/11944-c112-114))
11. URL: <http://comenius21century.weebly.com/methodologies-for-the-development-of-intercultural-competence-through-inter-language-teaching-and-learning-programmes.html>

**Լ. АРУΤՅՈՆՅԱՆ, Т. КИРАԿՈՍՅԱՆ – *Օ методах преподавания межкультурной коммуникации.*** – В статье рассматриваются принципы обучения студентов иностранным языкам, эффективность применения различных методов межкультурной коммуникации в процессе преподавания. Изучены и разработаны такие формы и методы обучения, которые помогут студентам не только общаться с англоговорящими студентами, но и воспринимать иностранную культуру и ее языковые проявления.

**Ключевые слова:** культура, электронное общение, методика преподавания, межличностные отношения, язык жестов

**L. HARUTYUNYAN, T. KIRAKOSYAN – On the Teaching Methods of Cross-Cultural Communication.** – The aim of the paper is to study the efficiency of the use of various methods in the process of teaching cross-cultural communication. An attempt is made to develop such forms and methods that will help the students not only to communicate with English-speaking students, but also to understand foreign culture and its linguistic manifestations.

**Key words:** culture, electronic communication, methods of teaching, interpersonal relations, language of gestures